ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) հայտարարում է Նախարարության իրավաբանական վարչության նախարարության իրավական շահերի պաշտպանության բաժնում փորձագետ ներգրավելու մասին

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության նախարարության իրավական շահերի պաշտպանության բաժնի փորձագետ

Աշխատանքների համառոտ նկարագրությունը՝

1. իրականացնել Նախարարության իրավական շահերի պաշտպանության նպատակով դատարան ներկայացվող նյութերի նախապատրաստում.
2. ներկայացնել դիրքորոշում դատական ատյանների կողմից վարույթ ընդունված՝ ընդդեմ Նախարարության բերված հայցադիմումների, վերաքննիչ և վճռաբեկ բողոքների վերաբերյալ.
3. իրականացնել Նախարարության նախաձեռնությամբ հայցերի, վերաքննիչ, վճռաբեկ բողոքների դատական ատյանների ներկայացման գործընթացներ.
4. համապատասխան լիազորագրի հիման վրա ապահովել դատական ատյաններում դատական նիստերին մասնակցություն.
5. իրականացնել <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան վարչական վարույթի իրականացման աշխատանքներ.
6. իրականացնել Նախարարության իրավասությանը վերապահված բնագավառներում կնքվող միջազգային համաձայնագրերի և պայմանագրերի նախագծերի մշակում, անհրաժեշտության դեպքում տրամադրել խորհրդատվություն.
7. մասնակցել միջազգային կազմակերպությունների ու օտարերկրյա պետությունների հետ կազմակերպվող սեմինարներին, խորհրդաժողովներին և այլ միջոցառումներին.
8. Նախարարության խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնել այլ աշխատանքներ:

Փորձագետ ներգրավելու ժամկետը՝ մինչև մեկ տարի ժամկետով:

Փորձագետի պարտականությունները՝

1. Բարեխղճորեն կատարել աշխատանքային պայմանագրով ստանձնած աշխատանքները:

2. Պահպանել համապատասխան մարմնում սահմանված ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը:

3. Պահպանել աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման միջոցները:

4. Իրականացնել աշխատանքային օրենսդրությամբ, «Հանրային ծառայության մասին» օրենքով և աշխատանքային պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականությունները:

Փորձագետին ներկայացվող պահանջները՝

1) <<Իրավագիտություն>> մասնագիտությամբ բարձրագույն կրթություն.

2) Հանրային ծառայության առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ իրավունքի բնագավառում՝ առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ.

3) ոլորտը կարգավորող օրենսդրության և իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

4) իրավական ակտերի մշակման փորձառություն.

5) համակարգչով և ժամանակակից այլ միջոցներով աշխատելու ունակություն.

6) անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.

7) ռուսերեն և անգլերեն լեզուների բավարար իմացություն:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 21.08.2025թ.

Աշխատանքի վայրը՝ ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3

հեռ. 010-511-355, 010-511-316, **Էլ. հասցե՝** http://mtad.am

Չի թույլատրվում հավակնորդի հետ պայմանագիր կնքել, եթե տվյալ անձը պաշտոնից ազատվել կամ տվյալ անձի ծառայությունը վերջին մեկ տարվա ընթացքում դադարեցվել է կարգապահական տույժ կիառելու, օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելու, օրենքի խախտմամբ պաշտոնի նշանակվելու, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները չպահպանելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու, ուժի մեջ մտած՝ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի դեպքերում, բացառությամբ այն դեպքերի, երբ նշանակվել է տուգանք, ինչպես նաև երկու տարի անընդմեջ իր մեղքով

վերապատրաստման անհատական ծրագրով հաստատված կրեդիտները չստանալու դեպքում:

Ընտրություն կատարելու եղանակն է՝ դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրություն

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում Նախարարության գլխավոր քարտուղարի անունով (դիմումը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),
- հայտարարություն ՀՀ կառավարության 02.08.2018թ. N 878-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետով նախատեսված սահմանափակումների բացակայության մասին (հայտարարությունը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),
- տվյալ աշխատանքին անցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի /ների/, վկայականի /ների/, աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք/ներ համապատասխան մարմնից/ներից) պատճենները բնօրինակների հետ միասին,
- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասից կցագրման վկայականի պատճենները՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
- մեկ լուսանկար 3+4 սմ չափսի,
- անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը,
- համառոտ CV:

ՀՀ քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9.30-ից մինչև 12.30-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից: